ԱՆԱՀԻՏ ՀԱՆԵՅԱՆ

ՀԱՅ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՁԱՅՆԵՂ ՇՆՉԵՂ ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հայտնի է, որ հայ բարբառների բաղաձայնական համակարգում ձայնեղ շնչեղների առկայությունն առաջին անգամ դիտարկվել է 19-րդ դարի վերջերին գերմանացի հնչյունաբան Զիվերսի, ապա և Հր.Աճառյանի կողմից: Այդ հնչյունների «հանելուկային» բնույթի բացահայտման խնդիրը մեկ դար շարունակ հետաքրքրել ու զբաղեցրել է օտարազգի և հայ բազմաթիվ լեզվաբանների: Ձայնեղ շնչեղների արտաբերական-ընկալողական, ձայնաբանական, գործառական, տարածքային յուրահատկությունների շուրջ պարբերաբար արվել են ուշագրավ դիտողություններ, կատարվել են ձայնաբանական հետազոտություններ և հնչյութաբանական վերլուծություններ, որոնց արդյունքներն ի մի են բերված մեր՝ «Ձայնեղ շնչեղները հայերենի բարբառներում» անտիպ աշխատության մեջ:

Ձայնեղ շնչեղների գործառական արժեքի շուրջ հայագիտության մեջ արտահայտված տեսակետներն ի վերջո հանգել են դրանց հնչյութային արժեքի հավաստմանը կամ ժխտմանը:

Ձայնեղ շնչեղների առկայությամբ բնորոշվող բարբառներում նախապես, առանց սկզբունքների հստակեցման Աճառյանն առանձնացրել է քառաստիճան (բ$^{\circ}$, բ, պ, փ) և եռաստիճան (բ$^{\circ}$, բ, փ) բաղաձայնական համակարգեր, որոնցում ձայնեղ շնչեղներին փաստորեն վերագրել է հպականների մյուս շարքերին հավասարազոր արժեք (1, էջ 105-106): Աճառյանի այս դասակարգումը ընդունվել և երկար ժամանակ կիրառվել է հայ բարբառագիտության բնագավառում (Ա.Ղարիբյան, Ա.Գրիգորյան, Գ.Ղափանցյան և այլք): Հետագայում Ղարիբյանը իր վերջին հոդվածներից մեկում Կենտրոնական Հայաստանի բարբառների քառաստիճան խումբը ներկայացրել է արդեն իբրև եռանդամ՝ բ$^{\circ}$, պ, փ համակարգով (2, էջ 26):

Գ.Ջահուկյանը իր հայտնի բանավիճային հոդվածներում (3), փաստարկելով բառասկզբի ձայնեղ շնչեղների և այլ դիրքերում հանդիպող ոչ շնչեղ (պարզ) ձայնեղների հնչյութային հակադրության բացակայությունը, դրանք առանձին հնչյութներ չի համարել: Սակայն ավելի ուշ, կրկին անդրադառնալով

քառաստիճան համակարգերի խնդրին, որոշակի սկզբունքների հաշվառմամբ գտնում է, որ զուտ ստատիկ-հնչյունաբանական դասակարգման համաձայն միայն բառասկզբի դիրքը հաշվի առնելով և բուն հայկական համակարգից ձայնեղասկիզբ թուրք-պարսկական փոխառությունները բացառելով այդ համակարգերը կարելի է համարել եռաստիճան ձայնեղազուրկ՝ բ°, պ, փ. և եռաստիճան խլազուրկ՝ բ°, բ, փ (4, էջ 20): Դասակարգման այս նոր սկզբունքին, ըստ երևույթին, Ջահուկյանը հանգել է նաև այն նկատառումով, որ ոչ բառասկզբի դիրքերում «հնչույթների տարբերակիչ հատկանիշները հանդես են գալիս անբավարար հստակությամբ, և դժվարանում է ձայնեղների ու խուլերի, շնչեղների ու ոչ շնչեղների տարբերակումը»(4, էջ 48): Այս դասակարգմամբ ձայնեղ շնչեղների շարքը դիտվել է իբրև բաղաձայնական համակարգի լիիրավ անդամ: Այսուհանդերձ, Ջահուկյանը չի բացարձակացնում ձայնեղ շնչեղների հնչույթային արժեքը և նշում է որոշ բարբառներում (Նոր Նախիջևանի Չալթը, Հաջընն) դրանց գործառույթը խուլերի ազատ կամ դիրքային տարբերակների արժեքով (4, էջ 45):

Գամկրելիձեն և Իվանովը, թեև իրենց վերականգնած հ.-ե. բաղաձայնական համակարգում շնչեղության հատկանիշը հնչույթաբանորեն էական չեն համարում, այլ միայն ուղեկցող հնչյունական հատկանիշ, սակայն իրավացիորեն գտնում են, որ հ.-ե. այն լեզուներում, որոնցում դիտվում է ձայնեղ շնչեղների առկայություն, «Հնչույթաբանական հայեցակետից էական է այն, որ նման հնչույթներով համակարգերում դրանց շարքը շնչեղ խուլերի շարքի հետ գտնվում է հարաբերակցական հակադրության մեջ: Հենց հնչույթաբանորեն դրանք կարող են բնորոշվել իբրև ձայնեղ (ոչ խուլ) շնչեղներ» (5, I):

Հակառակ տեսակետի համաձայն՝ ժխտվում է ձայնեղ շնչեղների հնչույթային արժեքը: Այն պաշտպանել են էդ.Աղայանը, որի կարծիքով շնչեղ ձայնեղները ոչ շնչեղ (պարզ) ձայնեղների ենթահնչույթներն են (6), Հովհ.Մուրադյանը, ըստ որի՝ ձայնեղների շնչեղությունը չունի հնչույթային արժեք (7), և հնչյունաբան Ա.Խաչատրյանը, որ պարբերաբար զբաղվել է ձայնեղ շնչեղների փորձառական քննությամբ, դրանց բնույթի և գործառական հատկանիշների բացահայտման խնդիրներով: Ըստ Խաչատրյանի՝ «Հայերենի շնչեղ ձայնեղները ինքնուրույն հնչույթներ չեն, այլ միայն ձայնեղ բաղաձայնների դիրքային տարբերակներ, որոնք հանդիպում են միայն բառասկզբում: Դրանց առկայությունը որոշակիորեն կապվում է առաջին վանկի ուժգին

արտասանության հետ» (8): Այս կարծիքի շուրջ նշենք մեր որոշ դիտարկումները.

ա) այն հիմնված է միայն Արարատյան բարբառի Աշտարակի խոսվածքի բաղաձայնական համակարգի հնչույթաբանական վերլուծության տվյալների վրա (9) և, կարծում ենք, չպետք է ընդհանրացվի, քանի դեռ կատարված չէ այլ տարածքների ձայնեղ շնչեղներով բաղաձայնական համակարգերի հնչույթաբանական համակողմանի քննություն: Ինքը՝ Ա.Խաչատրյանն էլ, ի դեպ, նշում է, որ իր եզրակացությունները դեռևս չեն սպառում խնդրի էությունը, քանի որ Աճառյանի և այլոց տվյալներով կան բարբառներ, որոնցում ձայնեղ շնչեղները հանդիպում են բոլոր դիրքերում և նույնիսկ ունեն իմաստատարբերակիչ գործառույթ (9, էջ 440):

բ) Հայտնի է, որ բառասկզբի դիրքում հնչույթների տարբերակիչ հատկանիշները դրսևորվում են առավել հստակությամբ, ուստի և դա համարվում է ուժեղ դիրք, ըստ որում ձայնեղ շնչեղները գործառում են հիմնականում այդ դիրքում և համակարգի մյուս անդամների հետ մտնում հնչույթային հակադրության մեջ: Ա.Խաչատրյանը Աշտարակի խոսվածքում ձայնեղ հնչույթներ է դիտել միջձայնավորային և հետռնգային դիրքերում, իսկ բառասկզբի ուժեղ դիրքում գործառող ձայնեղ շնչեղները համարել է ձայնեղների դիրքային տարբերակներ: Պիտի նշենք, սակայն, որ միջձայնավորային և հետձայնորդային դիրքերը որոշ բարբառներում ու խոսվածքներում բացառված չեն ձայնեղ շնչեղների համար. օր. բ^{c}ըբ^{c}ուգ, ագ^{c}աh (Բուլանուղ, Միրբար գյուղ), բ^{c}օրբ^{c}ոս (Բայազետ), արէգ^{c}ակ (Արաբկիր)... Իսկ հետռնգային դիրքում շնչեղությունը՝ ձայնեղ թե խուլ, հայ բարբառներում մեծ մասամբ չեզոքանում է. օր. ամբար, գ^{c}անգատ (Բայազետ), խընձոր, սըմբուլ, գ^{c}ունդ (Բուլանուխ), փա̈մբւա̈գ, քա̈նգըդիլ (<բամբակ, գանգատել, Տիգրանակերտ):

Ուրեմն՝ հետռնգային ձայնեղ հպականները բաղաձայնական տվյալ համակարգի շրջանակում իսկապես դիրքային տարբերակներ պիտի դիտվեն:

Միջձայնավորային դիրքում հանդիպող ձայնեղները (լագոտ, ադամ...), կարծում ենք, բառասկզբի ձայնեղ շնչեղների հետ չպետք է դիտվեն հնչույթային միասնության մեջ և համարվեն միևնույն ձայնեղ հնչույթը: Կենտրոնական Արարատյան-Գյումրի- Կարս-Մուշ-Ալաշկերտ... տարածքում, միջձայնավորային և բառավերջի դիրքերում գործառող ձայնեղ – կիսաձայնեղները (աբուր, շաբիգ^{կ}, ագ^{կ}, կուդ^{տ} ...) չեն հակադրվում համակարգի

պարզ (ոչ շնչեղ) խուլերին, քանի որ ծագումով հանգում են դրանց, ուստի և հնչույթային միասնության մեջ պետք է դիտվեն ոչ թե ձայնեղ շնչեղների , այլ բառասկզբի պարզ (ոչ շնչեղ) խուլերի հետ (պատ, տուն, կուտ) լրացուցիչ բաշխման հարաբերությամբ ներկայացնելով համակարգի ոչ շնչեղ հնչույթը: Համեմատել, օր.՝ բառավերջում հանդիպող կիսաձայնեղները ձայնային հստակ որակ են ստանում հնչյունական շղթայում ձայնավորական միջավայրում ձայնեղանալով, խուլերի միջավայրում խլանալով. օր.՝ կուդ^{ա}, կուդ ուդի, կուտ կուդի, խոդ^{ա}, խօդեր, խոտ տուր, մադ^{ա} -մադի, մատ չունի:

Ի դեպ, ձայնեղի և խուլի՝ հատկապես հնչյունական շղթայով պայմանավորված փոխանցումները բնորոշ են նաև արևմտյան տարածքի որոշ հայ բարբառների (14):

գ) Անհրաժեշտ է նաև նկատի առնել հայ բարբառների կենտրոնական և արևմտյան տարածքների բաղաձայնական համակարգերի միջև առկա էական տարբերությունները: Այսպես, եթե կենտրոնական տարածքի բարբառների (Արարատյան, Գյումրի, Մուշ...) բաղաձայնական եռանդամ համակարգում (բ^{ը}, պ, փ) ոչ շնչեղ հնչույթը բառասկզբի դիրքում խուլ է (տալ, տաշտ, պատ), ապա արևմտյան տարածքում՝ օր.՝ Սեբաստիայի բարբառի եռանդամ բաղաձայնական համակարգում (բ^{ը}, բ, փ), ոչ շնչեղ հնչույթը նույն դիրքում լիարժեք ձայնեղ է (դալ, բադ^{ա}). հմմտ. օր.՝ գ^{ը}ար (< գալ) - գար (<կար), դ^{ը}ուն (< դու) - դուն (< տուն), ձ^{ը}էր (< ձեր) – ձէր (< ծեր)... (10): Այս դեպքում, երբ ակնհայտ է բառասկզբի դիրքում ձայնեղ շնչեղներով և ձայնեղներով բառային զույգերի իմաստային հակադրությունը, գ^{ը}–ն և գ-ն, ձ^{ը}–ն և ձ-ն, բնականաբար, չեն կարող ներկայացնել միևնույն ձայնեղ հնչույթը:

Այսպիսով, ամփոփելով մեր դիտարկումները, գտնում ենք, որ ձայնեղ շնչեղները, քանի որ հիմնականում գործառում են բառասկզբի ուժեղ դիրքում և հակադրվում են բաղաձայնական համակարգի մյուս անդամներին՝ շնչեղ խուլերին, ոչ շնչեղ խուլերին (կամ ձայնեղներին), այսինքն՝ ունեն իմաստատարբերակիչ գործառույթ, ուրեմն և դրսևորում են հնչույթային արժեք:

Ինչպես նշեցինք, հայերենի բարբառներում ձայնեղ շնչեղները գործառում են հիմնականում բառասկզբի դիրքում (բ^{ը}էրան, դ^{ը}ուռ, գ^{ը}ըրել, ձ^{ը}որ, ջ^{ը}աղաց), բառամիջում՝ բաղադրյալ կազմություններում (անդ^{ը}ուռ, փագբ^{ը}էրան), մի շարք բարբառներում ու խոսվածքներում (Նոր Ջուղա, Բայազետ, Արծափ, Մուշի որոշ վայրեր, Արաբկիր) նաև միջձայնավորային կամ նախաձայնա-

վորային դիրքերում (ագ՞ահ, բ՞օրբ՞ոս, արեգ՞ակ), որտեղ, ըստ փորձառական քննության տվյալների, դրանք դրսևորում են հպական բաղադրիչի (հատույթի) զգալի ձայնեղություն (սրա մասին վկայել է նաև Ալլենը Նոր Ջուղայի բարբառի բաղաձայնների փորձառական քննության կապակցությամբ (11):

Ձայնեղ շնչեղները հայերենի բարբառներում հանդիպում են արտաբերական տարբերակներով, որոնք բնորոշվում են հիմնականում հագագային բնույթի յուրահատկություններով (12): Ըստ այդմ առանձնանում է երկու հիմնական տարբերակ՝ ուժգնային (ինտենսիվ) և թույլ (ոչ ինտենսիվ): Սրանց ընդհանուր հատկանիշը հպական բաղադրիչի ձայնային ոչ կայուն որակն է՝ ձայնեղությունից մինչև խլություն, իսկ տարբերությունը որոշվում է հագագային բաղադրիչի ձայնեղության բնույթով՝ ձայնորդային (ուժգնային) հագագի առկայությամբ կամ բացակայությամբ, որով դրսևորվում է հնչյունի արտաբերական ուժգնության աստիճանը:

Մեր կատարած դիտարկումների համաձայն (ըստ որում ելակետ է ընդունված բառասկզբի ուժեղ դիրքը)՝ ձայնեղ շնչեղները հնչյութաբանական մակարդակում գործառում են իբրև բաղաձայնական եռանդամ համակարգի լիիրավ միավոր: Համակարգը բաղկացած է ձայնեղ շնչեղ, խուլ շնչեղ և ոչ շնչեղ հնչյութներից: Ուժգնային տարբերակով բաղաձայնական համակարգերում ձայնեղ շնչեղ-խուլ շնչեղ հարաբերակցության մեջ, մեր կարծիքով, հակադրություն են ստեղծում ոչ թե ձայնեղություն-խլություն, այլ ձայնեղ շնչեղություն-խուլ շնչեղություն էական հատկանիշները, որոնք նաև հնչյութաբանորեն պետք է դիտվեն անտարրալուծելի: Համակարգի ոչ շնչեղ հնչյուրը, անկախ ձայնային որակից (խուլ, ձայնեղ, կիսաձայնեղ), նշված հարաբերակցության եզրերից յուրաքանչյուրին հակադրվում է ոչ շնչեղություն հատկանիշով. օրինակներ (Մուշ, Բուլանուխ)՝

բ՞էդ՝ (խոշոր) - փէդ՝ (փայտ)	դ՞ուր (գալ) – թուր - տուր
գ՞ընել - քընել	դ՞աշտ - տաշտ
գ՞ող - կող	դ՞ան (այնտեղ) -թան
գ՞ըզել – կըզել	կար – քար
դ՞ալ - թալ (գցիր) - տալ	ձ՞ախ – ցախ – ծախ
դ՞աս – թաս – տաս (տալ, ըղձ.)	ճար – չար

Այսպիսով՝ ձայնեղ շնչեղ հնչյուրը ուժգնային տարբերակով բաղաձայնական համակարգում դրսևորվում է մեկ էական հատկանիշով՝ ձայնեղ

շնչեղությամբ, որը բնորոշվում է իբրև ստորին կոկորդային (լարինգալ) մաքուր կամ աղմկավոր ձայնային արտաբերություն (12): Անկախ հնչյունի հպական բաղադրիչի որակից՝ ձայնեղ, խուլ, թե կիսաձայնեղ, հնչյունի բնույթը որոշվում է ձայնեղ հագագով՝ ինչպես արտաբերական – ընկալողական, այնպես էլ փործառական և գործառական հայեցակետերով: Այնպես որ հնչյունի ձայնեղ շնչեղ (և ո՛չ շնչեղ ձայնեղ) անվանումով արտացոլվում է նրա՝ հնչույթաբանորեն էական հատկանիշը:

Ձայնեղ շնչեղների ուժգնային տարբերակը գործառում է հայերենի բարբառների կենտրոնական, հարակից արևմտյան և մասամբ հյուսիս-կենտրոնական տարածքներում:

Ձայնեղ շնչեղների թույլ (ոչ ինտենսիվ) տարբերակը ընդհանուր առմամբ ընկալվում է որպես շնչեղ, սակայն, ի տարբերություն նախորդ տարբերակի, զուրկ է հագագի յուրահատուկ կոկորդային բնույթից: Նրանով սկսվող առաջնավանկը չունի ուժգնային արտաբերություն (ինտենսիվություն): Ըստ Աճառյանի՝ «...երևի ... այս կարգի բաղաձայնների մեջ շունչը թրթռուն չէ» (13, էջ 15): Ձայնաբանական (օսցիլոգրաֆիկական) հետազոտության տվյալների համաձայն՝ նրանում ձայնեղ շնչեղությունը իրացվում է հիմնականում խուլ հագագի (h) մասամբ ձայնեղացած տարբերակով, այսինքն ունի թույլ բնույթ՝ զերծ աղմկոտ արտաբերությունից: Այսուամենայնիվ, եռանդամ բաղաձայնական համակարգում ձայնեղ շնչեղների թույլ տարբերակը թեկուզ և թույլ արտահայտված մասամբ ձայնեղ շնչեղությամբ հակադրվում է համակարգի ուժեղ, բոլոր դիրքերում կայուն անդամին՝ խուլ շնչեղներին, և ոչ շնչեղ հնչույթին, որը հնչյունապես իրացվում է որպես ձայնեղ, կիսաձայնեղ և խուլ. կիսաձայնեղները հնչյունական հստակ որակ են դրսևորում խոսքի շղթայում՝ համապատասխան հնչյունական միջավայրում ձայնեղանալով կամ խլանալով: Այս տարբերակը տառադարձվում է հետևյալ կերպ՝ բ̓, գ̓, դ̇, ձ̓, ջ̓ (15). օրինակներ (Խոտրջուր).

Գ̓ար (գալ, անկ.անց.) - գար-քար	դ̇ալ (դալ, խիժ) – դ̆ալ (տալ)
գ̓ող - գ̆ող (գ̆-ն կիսաձայնեղ)	դ̇աս - դաս – թաս
գ̇ալ – կալ	դ̇ուք – թուք
գ̓էր – կէր	

Ձայնեղ շնչեղների թույլ տարբերակը գործառում է հայ բարբառների արևմտյան ցրիվ տարածքում՝ Խոտրջուր, Ակն, Համշեն (Մալա), Առտիալ,

Սուչավա, Նիկոմիդիա, Բեյլան, Նոր Նախիջևան, որոնցից, ցավոք, փորձառական քննության է ենթարկված միայն Խոտրջուրի հպականների համակարգը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հր. Աճառյան, Հայ բարբառագիտություն, Մոսկվա-Նոր Նախիջևան, 1911, 105-106:
2. Ա.Ղարիբյան, Հայերենի հպականների համակարգը, Հայկական կոնսոնանիզմը միջազգային լեզվաբանության գնահատմամբ, Ե., 1976, 26:
3. Գ.Ջահուկյան, Հայ բարբառագիտությունը և հայերենի բարբառների ծագման հարցը, ՊԲՀ, 1959, թիվ 2-3: К вопросу о происхождении консонантизма армянских диалектов, ВЯ, 1960, N 6.
4. Գ. Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972:
5. Т.Гамкрелидзе, Вяч. Иванов, Индоевропейский язык и индоевропейцы, I, 1984, 15.
6. Էդ.Աղայան, Գրաբարի քերականություն, Ե., 1964, 150:
7. Հ. Մուրադյան, Հայոց լեզվի պատմական քերականություն, 1, Ե., 1982, 284:
8. Ա.Խաչատրյան, Ժամանակակից հայերենի հնչույթաբանություն, Ե., 1988, 146-147:
9. А.Хачатрян, Природа звонких придыхательных согласных в некоторых армянских диалектах, Лингвистическая география, диалектология и история языков, Ер., 1976, 435-436. Նույնը՝ 440:
10. Հոդվածում բերված բարբառային օրինակները քաղված են ԳԱԱ Հր.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հայ բարբառագիտության բաժնի՝ ըստ ՀԲԱ ծրագրի հավաքված ձեռագիր նյութերից:
11. W.Allen, "Notes on the phonetics of an Eastern Armenian speaker", "Transactions of the Philologucal society", Oxford, 1950.
12. Ա.Հանեյան, Շնչեղ ձայնեղների արտաբերական տարբերակները հայերենի բարբառներում, Երիտասարդ լեզվաբանների հանրապետական հինգերորդ գիտաժողովի նյութեր, Ե., 1986, էջ 60-62:
13. Հր.Աճառյան, Քննություն Առտիալի բարբառի, Ե., 1953, 15:
14. Դ.Կոստանդյան, Երզնկայի բարբառը, Ե., 1979, 21-23:

Ձայնեղ շնչեղության երկու տարբերակների տառանշանները՝ C և Ɔ, ինչպես նաև հնչյունի ձայնաբանական հիմնական հատկանիշի թուլության նշանը՝ ˘, ներկայացվում են ըստ հայերենի բարբառագիտական տառադարձության՝ ԳԱԱ Հր.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում մշակված նոր համակարգի: